



**ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ**  
**Հայաստանի Հանրապետություն – Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ, 2018թ. դեկտեմբերի 9**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՆԱԽԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչը պետք է պահպանվի ընտրական հետագա բարեփոխումների ժամանակ: Քաղաքական բաց բանավեճը, այդ թվում՝ ԶԼՄ-ներում, նպաստել է աշխույժ քարոզարշավի անցկացմանը՝ չնայած առցանց սադրիչ հռետորաբանության դեպքերը մտահոգության տեղիք են տվել: Կանխամտածված ընտրախախտումների, այդ թվում՝ ընտրակաշառքի և ընտրողների վրա ճնշումների ընդհանուր բացակայությունը իրական մրցակցության հնարավորություն է ընձեռել: Քարոզարշավի ֆինանսավորման ամբողջականությունը խաթարվել է կարգավորման, հաշվետվողականության և թափանցիկության պակասի պատճառով: Չնայած կարճ ժամկետների՝ ընտրությունները լավ էին կազմակերպված: Ընտրությունների օրն ընթացել է հանգիստ և խաղաղ, որի բոլոր փուլերը դրական են գնահատվել ԸՄԴԱ գրեթե բոլոր դիտորդների կողմից, ովքեր նաև նշել են ընթացակարգերի հետ ընդհանուր համապատասխանության մասին:

Ընտրություններն անցկացվել են 2018թ. ապրիլին տեղի ունեցած հակակառավարական բողոքի ցույցերից հետո, որի արդյունքում Սերժ Սարգսյանը հրաժարական էր տվել վարչապետի պաշտոնից և տեղի է ունեցել իշխանափոխություն՝ Նիկոլ Փաշինյանի կողմից մայիսին նոր կառավարության ձևավորմամբ: Նոր կառավարության կողմից ներկայացվել է փոփոխությունների նախագիծ ընտրական համակարգում զգալի փոփոխություններ կատարելու և այն բացարձակ համամասնականով փոխարինելու նպատակով, որը, սակայն, ընտրությունների օրվա նշանակումից երեք օր առաջ չէր ստացել խորհրդարանում պահանջվող երեք-հինգերորդ մեծամասնության ձայները:

Ընտրությունները համապարփակ ձևով կարգավորվում են Սահմանադրությամբ և 2016թ. ընտրական օրենսգրքով: 2018թ. մայիսին արված վերջին փոփոխություններով ընդլայնվել է այն անձանց ցուցակ, ում արգելվում է քարոզարշավ իրականացնել, վերացվել են լրատվամիջոցների դիտորդների նկատմամբ սահմանափակումները և խստացվել են ընտրախախտումների համար սահմանվող պատժամիջոցներն ու տույժերը՝ համաձայն ԺՀՄԻԳԻ և Եվրոպայի Խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների: Սահմանվել է քրեական պատասխանատվություն անհատներին քարոզարշավին մասնակցել հարկադրելու և ընտրակաշառքին նպաստելու համար: Ցանկալի է, որ հաշվի առնվեն ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի Խորհրդի դեռևս անտեսված հանձնարարականները, այդ թվում՝ քարոզարշավի ֆինանսավորման կարգավորումներին, ընտրական բողոքներ ներկայացնելու իրավունքի սահմանափակումներին, թեկնածուների

քաղաքացիության հետ կապված պահանջներին և դաշինքների խորհրդարան անցնելու համար սահմանված շեմին վերաբերող հանձնարարականները:

Չնայած կարճ ժամկետներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն (ԿԸՀ) ընդհանուր առմամբ իր աշխատանքը կատարել է թափանցիկ կերպով և մասնագիտորեն, և պահպանել բոլոր օրենքով նախատեսված ժամկետները: Ընտրությունների նախապատրաստական շրջանում ԿԸՀ-ն և Տարածքային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) վայելել են ընտրական գործընթացի շահառուների վստահությունը և անցկացրել բաց նիստեր: ԿԸՀ-ն իրականացրացրել է ընտրողների ուսուցման համապարփակ արշավ ընտրություններին նրանց մասնակցությունը խրախուսելու, քվեարկության ընթացակարգերը բացատրելու և ընտրակաշառքի մասին նախազգուշացնելու նպատակով: Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովները (ԸՀ) ձևավորվել և նրանց անդամները վերապատրաստվել են սահմանված ժամկետներում: Ընդհանուր առմամբ վերապատրաստումները գնահատվել են դրական:

Վերջնական ընտրացուցակները ներառել են է ընդհանուր թվով 2,573,779 ընտրող՝ ներառյալ մեծ թվով արտասահմանում բնակվող քաղաքացիներ: ԸՄԴԱ զրուցակիցների մեծ մասն ընդհանուր առմամբ վստահություն է հայտնել ընտրացուցակների ճշգրտության վերաբերյալ: Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը շարունակական ջանքեր է գործադրել ընտրողների տվյալները թարմացնելու ուղղությամբ: Դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձինք իրավունք չունեն քվեարկելու՝ չնայած հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքների բոլոր անհիմն սահմանափակումները վերացնելու վերաբերյալ միջազգային չափանիշների:

Ընտրությունների օրը ընտրողների ինքնությունը հաստատվել է ընտրողների գրանցման տեխնիկական սարքերի (ԸԳՍ) միջոցով, որոնցում առկա են ընտրացուցակների էլեկտրոնային պատճենները: Ընտրողի ինքնությունը հաստատող փաստաթղթերը սքանավորվել են ԸԳՍ միջոցով ընտրատեղամասում ընտրողների գրանցված լինելու փաստը ստուգելու և բազմակի քվեարկության դեպքերը կանխելու համար: Որպես այլ անձի փոխարեն քվեարկելու դեպքերի կանխման կարևոր միջոց, և չնայած տվյալների գաղտնիության վերաբերյալ մտահոգություններին՝ ԿԸՀ-ն պարտավոր է սքանավորել և առցանց հրապարակել քվեարկած ընտրողների ցուցակները, որոնք պարունակում են քվեարկությանը մասնակցած ընտրողների անձնական տվյալներ և ստորագրությունները:

Ներառական գործընթացի շրջանակներում ԿԸՀ-ն գրանցել է դիմում ներկայացրած բոլոր ինը քաղաքական կուսակցությունների և կուսակցությունների երկու դաշինքների ընտրացուցակները: Օրենքը նախատեսում է չորս մանդատ ամենամեծ մշտական բնակչություն ունեցող ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար, և այս ընտրություններում երեք կուսակցություն և մեկ դաշինք առաջադրել են փոքրամասնության թեկնածուներ: Մեկից ավել քաղաքացիություն ունեցող անձանց՝ ընտրություններին մասնակցելու հետ կապված առկա սահմանափակումները հակասում են ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորություններին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Մրցակիցները կարողացել են ազատորեն իրականացնել իրենց քարոզարշավները. քարոզարշավի ընթացքում լիովին պահպանվել են միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների, արտահայտվելու և տեղաշարժի հիմնարար ազատությունները: Պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածը եղել է շատ կարճ, սակայն քարոզչությունը սկսել է ավելի վաղ՝ ինչն արգելված չէ օրենքով: Քարոզարշավի ժամանակ սոցիալական ցանցերում նկատվել է որոշ մրցակիցների միջև ապատեղեկատվության տարածում, ինչպես նաև սադրիչ մտքերի փոխանակում: Վարչական ռեսուրսի չարաշահումը և պետական հատվածի աշխատակիցների վրա ճնշումների գործադրումը կանխելու համար իշխանությունները իրագրել են տեղական պաշտոնյաներին, դպրոցի տնօրեններին, առողջապահության ոլորտի աշխատակիցներին և այլ անձանց համապատասխան արգելքների մասին: ԸՄԴԱ շատ զրուցակիցներ մատնանշել են իշխանությունների, մրցակիցների և հենց ընտրողների մոտ առկա քաղաքական կամքը՝ թույլ չտալու ձայների առք ու վաճառքի կիրառում: Դրական է այն, որ ընտրական շահառուների կողմից չեն եղել հաղորդումներ ընտրակաշառքի և ընտրական այլ խախտումների համակարգային փորձերի մասին: Որոշ ԸՄԴԱ զրուցակիցներ այնուամենայնիվ պնդումներ են ներկայացրել առ այն, որ մի շարք քարոզարշավներում աշխատող անձանց և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (ՔՀԿ) դիտորդների հետ կարճաժամկետ պայմանագրեր կնքվել են՝ հիմնականում մեկ մրցակցի կողմից, ենթադրաբար վերջիններիս ձայները գնելու նպատակով:

Թեկնածուների բոլոր ընտրացուցակներն ապահովել են 25 տոկոս գենդերային քվոտայի պահանջը և ընդհանուր թվով 1,444 թեկնածուների 32 տոկոսը կազմել են կանայք: Այս քվոտան, այնուամենայնիվ, չի երաշխավորում խորհրդարանում կանանց նույն ներկայացվածությունը, մասնավորապես քանի որ մանդատների կեսը բաշխված է ըստ վարկանշային քվեների: Կուսակցությունները հազվադեպ են ընդգրկել կին թեկնածուներին իրենց քարոզարշավներում. կանայք հատուկենտ դեպքերում են անցկացրել ինքնուրույն քարոզարշավներ և դիտարկված հանրահավաքներում հազվադեպ են հանդես եկել էլույթներով: Որոշ կին թեկնածուներ դարձել են նվաստացուցիչ հռետորաբանության թիրախ՝ իրենց սեռային պատկանելության պատճառով:

Նախընտրական հիմնադրամներ մուծումներ կարող են կատարվել ընտրողների, թեկնածուների և քաղաքական կուսակցությունների կողմից, և դրանք չպետք է գերազանցեն մուծումների և ծախսերի համար նախատեսված սահմանաչափը: Պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ ստացված մուծումների և կատարված ծախսերի մասին հաշվետվությունների նկատմամբ պահանջները երկիմաստ են: Բացի այդ, որոշ թեկնածուներ հաստատել են ժՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենք ուղղակիորեն ֆինանսավորել են իրենց քարոզարշավները՝ ինչը հանդիսանում է պաշտոնական նախընտրական հիմնադրամի շրջանցում և հակասում է օրենքին: Չնայած ժՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներին՝ կազմակերպչական այլախի ծախսերը, ինչպիսիք են գրասենյակային տարածքի, հաղորդակցության, փոխադրամիջոցների և անձնակազմի հետ կապված ծախսերը չեն համարվում ընտրական ծախսեր, և, հետևաբար կարող են չզեկուցվել խաթարելով քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը:

Լրատվական դաշտը բազմազան է, և Սահմանադրությամբ երաշխավորված արտահայտման ազատությունը պահպանվել է: Հեռուստատեսությունը համարվում է քաղաքական տեղեկատվության առաջնային աղբյուր, իսկ առցանց լրատվամիջոցներն ու սոցիալական ցանցերն ունեն գրավի կիրառում: ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից կատարված լրատվամիջոցների մշտադիտարկումը ցույց տվեց, որ հեռարձակողները գրավի ջանքեր են գործադրել ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին և դաշինքներին լուսաբանելու համար՝ նպաստելով տեղեկացված ընտրության կատարման համար ընտրողներին հասանելի տեղեկատվության բազմազանությանը: Մասնավոր շատ լրատվամիջոցներ թվում են քաղաքական կուսակցությունների հետ խիստ փոխկապակցված, և դրանցից որոշները ակներև նախապատվություն են դրսևորում: Հանրային հեռուստաընկերությունն ապահովել է ողջամտորեն հավասարակշռված լուսաբանում: Դրական է այն փաստը, որ մի շարք լրատվամիջոցներ, այդ թվում՝ հանրային հեռուստաընկերությունը, կազմակերպել են իրական բանավեճեր՝ ներառելով բոլոր մրցակից ուժերի թեկնածուներին:

Չնայած դիմումների ներկայացման և բողոքարկման համակարգի հասանելիության վերաբերյալ մտահոգություններ չեն հնչել, մինչև ընտրության օրը սահմանափակ թվով բողոքներ են ներկայացվել ընտրական վարչարարության մարմիններ և դատարաններ: Չնայած ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներին և միջազգային լավ պրակտիկային՝ ընտրական գործընթացի հետ կապված բողոքներ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը հիմնականում սահմանափակվում է կուսակցությունների վստահված անձանցով և հանձնաժողովների անդամներով: Բողոքների ներկայացման համար հիմնականում սահմանված են խելամիտ ժամկետներ:

Ըստ օրենքի ընտրատեղամասերում դիտարկումներ կարող են անել միջազգային և ՔՀԿ դիտորդները, լրատվամիջոցները, ինչպես նաև մրցակիցների վստահված անձինք: ԿԸՀ-ն գրանցել է ընդհանուր թվով 17,813 ՔՀԿ դիտորդ՝ 22 կազմակերպություններից: Չնայած կայացած և փորձառու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից գործադրվել են ջանքեր այս ընտրությունները դիտարկելու ուղղությամբ՝ ԸՄԴԱ մի շարք գրուցակիցներ հնչեցրել են մտահոգություններ քաղաքական կուսակցությունների հետ որոշ հավատարմագրված ՔՀԿ դիտորդների ուղղակի կապի՝ այդ թվում պայմանագրային հարաբերությունների մասին, որը կարող է կասկածի տակ դնել նրանց անկողմնակալությունը: Ընտրատեղամասերում ՔԿՀ դիտորդների հարաբերական փոքր թվով ներկայությունը՝ համեմատած հավատարմագրված դիտորդների թվի հետ, խոսում է ընտրությունների օրվա գործընթացները դիտարկելու նրանց իրական մտադրության կամ հետաքրքրության պակասի մասին:

Ընտրությունների օրն անցել է հանգիստ, խախաղ, առանց ընտրողների հանդեպ ճնշումների և ահաբեկումների, և դրական է գնահատվել ԸՄԴԱ գրեթե բոլոր դիտորդների կողմից: ԸՄԴԱ գրեթե բոլոր դիտարկումներում ընտրատեղամասերի բացումը ստացել է դրական գնահատական, ընտրատեղամասերն ընդհանուր առմամբ բացվել են ճիշտ ժամանակին: Քվեարկությունը դրական է գնահատվել 99 տոկոս դիտարկումներում՝ ԸԸՀ-ների կողմից ընթացակարգերի պահպանման անդրադարձով: Չայների հաշվարկը դրական

Է գնահատվել դիտարկված բոլոր ընտրատեղամասերում բացի երկուսից: Նշվում է, որ ձայների հաշվարկն իրականացվել է առանց էական ընթացակարգային խախտումների: Աղյուսակավորման ընթացքը դրական է գնահատվել գրեթե բոլոր ՏՀՀ-ներում՝ չնայած մի քանի կազմակերպչական թերությունների:

## ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

### Նախադրյալներ

Վերջին խորհրդարանական ընտրությունները Հայաստանում տեղի են ունեցել 2017թ. ապրիլի 2-ին: Դրանք եղել են խորհրդարանական առաջին ընտրությունները 2015թ. սահմանադրական փոփոխություններից հետո, որի արդյունքում նախագահի լիազորությունները նվազեցվել են ի օգուտ վարչապետի և խորհրդարանի: Այդ ընտրություններից հետո 58 մանդատ ստացած Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) և 7 մանդատ ստացած Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ) միջև կազմված կոալիցիան կազմել է կառավարություն, մինչդեռ Ծառուկյան դաշինքը (31 մանդատով) և Ելք դաշինքը (9 մանդատով) կազմել են ընդդիմություն:

2018թ. ապրիլին տեղի ունեցած հակակառավարական բողոքի ցույցերը, որի կազմակերպիչները բնութագրել են այն որպես ոչ բռնի “թավշյա հեղափոխություն”, հանգեցրել են վարչապետ Սերժ Սարգսյանի հրաժարականին և իշխանափոխության: Մայիսի 8-ին խորհրդարանը երկրորդ փորձով ընտրել է ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանին նոր վարչապետի պաշտոնում: Վարչապետ Փաշինյանի կողմից ձևավորված կառավարությունը հանձն է առել մեկ տարվա ընթացքում կատարել ընտրական բարեփոխումներ և անցկացնել խորհրդարանական նոր ընտրություններ:

Հոկտեմբերի 17-ին կառավարությունը խորհրդարան է ներկայացրել Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը՝ որով փորձ էր արվում զգալի փոփոխություններ կատարել ընտրական համակարգում և ընտրություններին առնչվող այլ ոլորտներում: Փոփոխությունները ներառում էին տարածքային բաց ցուցակների վերացում, անցում բացարձակ համամասնական ընտրակարգի՝ 30 տոկոս գենդերային քվոտայով, և խորհրդարան անցնելու համար սահմանված շեմերի իջեցում:<sup>1</sup> Արտահերթ ընտրությունների անցկացման մասին հայտարարությունից երեք օր առաջ խորհրդարանում կայացած վերջին քվեարկության ժամանակ առաջարկված փոփոխությունները չեն ստացել պահանջվող ձայների մեծամասնության երեք-հինգերորդը:<sup>2</sup>

<sup>1</sup> Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2002թ. Ընտրական հարցերում օրինակելի վարքագծի վերաբերյալ կանոնագրքի II.2.բ բաժնում նշվում է, որ “ընտրական օրենսգրքի հիմնարար տարրերը, մասնավորապես ընտրական համակարգը, ... չպետք է ենթարկվեն փոփոխությունների ընտրություններից առաջ առնվազն մեկ տարվա ընթացքում...”

<sup>2</sup> Խորհրդարանը դեմ է քվեարկել փոփոխությունների նախագծին հոկտեմբերի 22-ին (56 կողմ և 3 դեմ) և հոկտեմբերի 29-ին (62 կողմ և 2 դեմ): Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու համար պահանջվում է առնվազն 63 կողմ քվե:

Նոյեմբերի 1-ին նախագահը հայտարարեց, որ արտահերթ ընտրությունները տեղի են ունենալու դեկտեմբերի 9-ին: Այս ընտրությունները արդյունք են հոկտեմբերի 16-ին վարչապետ Փաշինյանի տակտիկական հրաժարականի, որը ներկայացվել էր խորհրդարանը լուծարելու նպատակով: Պատգամավորների մեծամասնությունը նախապես պայմանավորվել էր չընտրել նոր վարչապետ արտահերթ ընտրությունների անցկացման հնարավորություն ստեղծելու համար:<sup>3</sup>

Կանայք թերներկայացված են պետական պաշտոններում. խորհրդարանի վերջին գումարման ժամանակ նրանք ունեին մանդատների 19 տոկոսը, նախարարական 21 պաշտոններից զբաղեցնում են 1-ը, մարզպետի 10 պաշտոններից՝ ոչ մեկը և քաղաքապետի 49 պաշտոններից միայն 1-ը:

### Իրավական դաշտ և ընտրական համակարգ

Խորհրդարանական ընտրությունների իրավական դաշտը ընդգրկում է: Ընտրությունները հիմնականում կանոնակարգվում են կանոնադրությամբ և 2016թ. Ընտրական օրենսգրքով, որը վերջին անգամ խորհրդարանական մասով փոփոխությունների է ենթարկվել 2018թ. Մայիսին: Իրավական դաշտը ներառում է մի շարք այլ օրենքներ, այդ թվում՝ Քաղաքական կուսակցությունների, Հավաքների ազատության մասին օրենքները, Քրեական օրենսգիրքը, Վարչական իրավախախտությունների վերաբերյալ օրենսգիրքը, ինչպես նաև ԿԸՀ որոշումները:

Ընտրական օրենսգրքում և այլ օրենսդրական ակտերում՝ 2018թ. մայիսին կատարված փոփոխություններով ընդլայնվել է այն պետական պաշտոնյաների և պետական աշխատակիցների ցուցակն, ում արգելված է քարոզարշավ իրականացնել, վերացվել են լրատվամիջոցների ներկայացուցիչների հավատարմագրման հետ կապված սահմանափակումները՝ համաձայն ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների: Բացի այդ, սահմանվել են ավելի խիստ պատժամիջոցներ և տույժեր ընտրախախտումների համար, և սահմանվել է քրեական պատասխանատվություն՝ անհատներին քարոզարշավին մասնակցել հարկադրելու, ընտրակաշառքի գործընթացը դյուրացնելու և ընտրողների վրա ներգործելու նպատակով կազմակերպված բարեգործության համար: Ի հավելումն ընտրական հանձնաժողովների, քաղաքական կուսակցությունները, թեկնածուները և դիտորդները այժմ նույնպես իրավունք ունեն հետաքննություն նախաձեռնել վարչական իրավախախտումների մասով:

ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին մի քանի հանձնարարականներ մնացել են անտեսված, այդ թվում՝ նրանք, որ առնչվում են քարոզարշավի ֆինանսական հաշվետվություններից կազմակերպչական ծախսերի բացառմանը, ընտրական հարցերով բողոք բերելու իրավունքի նեղ սահմանմանը, թեկնածուների համար քաղաքացիության և

<sup>3</sup> Ըստ օրենքի խորհրդարանը լուծարվում է վարչապետ ընտրելու երկրորդ ձախողված փորձից հետո:

բնակության վայրի Սահմանդրությամբ սահմանված պահանջներին;<sup>4</sup> խորհրդարան անցնելու համար դաշինքների համար սահմանված նվազագույն շեմերին և ընտրությունների առաջին փուլից հետո ձևավորվող կոալիցիաների մասնակիցների թվի սահմանափակումներին:

Ըստ Ընտրական օրենսգրքի երկաստիճան համամասնական ընտրակարգով խորհրդարան է անցնում առնվազն 101 պատգամավոր, որոնք ընտրվում են մեկ փակ համապետական ցուցակից և 13 բաց տարածքային ցուցակներից: Քվեաթերթիկում նշվում է և՛ համապետական ցուցակը, և՛ համապատասխան տարածքային ցուցակը (այբբենական կարգով), և ընտրողը կարող է իր նախընտրությունը տալ տարածքային մեկ թեկնածուի:<sup>5</sup>

Մանդատներ ստանալու համար քաղաքական կուսակցությունները պետք է հաղթահարեն հինգ տոկոսի շեմը (յոթ տոկոս դաշինքների համար): Մանդատները նախ բաշխվում են կուսակցությունների և դաշինքների միջև համապետական ցուցակով ստացված ձայների համաձայն: Ապա մանդատների կեսը բաշխվում է համապետական ցուցակով՝ ըստ թեկնածուների հերթականության, իսկ մյուս կեսը բաշխվում է վարկանիշային ցուցակով՝ առավել թվով ձայներ ստացած տարածքային թեկնածուների միջև:<sup>6</sup>

Համակարգը նախատեսում է ընդհանուր թվով մինչև չորս մանդատ վերջին մարդահամարի տվյալներով ամենամեծ մշտական բնակչություն ունեցող չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար՝ (2011թ. եզրիններ, ռուսներ, ասորիներ և քրդեր): Յուրաքանչյուր կուսակցություն կամ դաշինք կարող է իր համապետական ցուցակին ավելացնել երկրորդ մաս, նշելով ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի թեկնածուները: Այս ընտրություններին միայն Լուսավոր Հայաստան կուսակցությունը, Իմ քայլը դաշինքը, Բարգավաճ Հայաստան և Օրինաց երկիր կուսակցություններն են գրանցել ազգային փոքրամասնությունների ցուցակներ:

Ըստ Սահմանադրության կառավարություն ձևավորելու համար անհրաժեշտ է խորհրդարանական կայուն մեծամասնություն (մանդատների 54 տոկոսը): Եթե հաղթող կուսակցությունը ստանում է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, բայց 54 տոկոսից քիչ, վերջինիս տրամադրվում են լրացուցիչ մանդատներ պահանջվող կայուն մեծամասնություն ձևավորելու համար:<sup>7</sup> Եթե ընտրությունների արդյունքում կամ արդյունքների ամփոփումից հետո վեց օրվա ընթացքում քաղաքական կոալիցիա կազմելու

<sup>4</sup> Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի՝ Ընտրական հարցերում օրինակելի վարքագծի վերաբերյալ կանոնադրքի 2002թ. Կանոնադրքի պարբերություն I.I.I. c.iii-ում նշվում է, որ “բնակության պահանջ քաղաքացիների վրա կարող է դրվել միայն տեղական կամ տարածքային ընտրությունների ժամանակ”:

<sup>5</sup> Տարածքային թեկնածուները պետք է ներառվեն նաև համապետական ընտրացուցակում:

<sup>6</sup> Ընտրատարածքային յուրաքանչյուր ցուցակին հատկացվող մանդատների քանակը հիմնված է բոլոր ընտրատարածքներում ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների ստացած ձայների վրա՝ հաշվարկված Դ՝Հոնդթի հաշվարկման բանաձևով: Ընտրատարածքային մանդատները հատկացվում են ըստ վարկանիշային քվեների թվի:

<sup>7</sup> Եթե հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանում է ընդհանուր մանդատների երկու-երրորդը, մյուս կուսակցությունները կամ դաշինքները, որոնք նույնպես անցել են խորհրդարան, ստանում են լրացուցիչ մանդատներ մեկ-երրորդ փոքրամասնություն կազմելու համար:

եղանակով կայուն մեծամասնություն չի ձևավորվում, անցկացվում է ընտրությունների երկրորդ փուլ առավելագույն ձայներ ստաված երկու թեկնածուական ցուցակների միջև ընտրությունների օրվանից հետո 28-րդ օրը:<sup>8</sup>

### Ընտրական վարչարարություն

Ընտրությունների վարչարարությունն իրականացվել է եռաստիճան համակարգով՝ բաղկացած ԿԸՀ-ից, 38 Տարածքային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ) և 2,010 Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովներից (ԸԸՀ): ԿԸՀ-ն մշտական գործող և մասնագիտացված մարմին է՝ բաղկացած յոթ անդամից, որոնք ընտրվում են վեց տարի ժամկետով ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք-հիգերորդի կողմից: ԿԸՀ բոլոր չորս արական սեռի և երեք իգական սեռի անդամները վերանշանակվել են 2016թ. հոկտեմբերին:

ԿԸՀ-ն պատասխանատու է ընտրությունների անցկացման համար և ունի լիազորությունների և պատասխանատվությունների մեծ շրջանակ: ԿԸՀ-ն վայելում է վստահություն ընտրական այն շահառուների շրջանում, որոնց հանդիպել է ԺՀՄԻԳ ԸԴԱ: ԿԸՀ բոլոր որոշումներն ընդունվել են միաձայն պարբերաբար անցկացված նիստերի ընթացքում, որոնք հեռարձակվել են առցանց: ԿԸՀ-ն պահպանել է օրենքով սահմանված բոլոր ժամկետները և հիմնականում ժամանակին հրապարակել իր որոշումները:

Սկսած նոյեմբերի 19-ից ԿԸՀ-ն համապարփակ արշավ է անցկացրել ընտրություններին մասնակցությունը խրախուսելու, ընտրողներին ընտրության օրվա ընթացակարգերին ծանոթացնելու և ընտրակաշառքի կիրառման դեմ նախազգուշացնելու համար, այդ թվում՝ լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով (նաև մատնախոսության լեզվով): Այն նաև տպագրել է նյութեր քվեարկելու ընթացակարգերի վերաբերյալ, այդ թվում զինձառայողների համար, բայց դժվարությունների է հանդիպել հեռավոր վայրերում դրանց բաշխման հարցում:

ՏԸՀ-ները մշտական գործող մասնագիտացված մարմիններ են՝ բաղկացած յոթ անդամից, որոնք նշանակվում են ԿԸՀ կողմից վեց տարի ժամկետով՝ արժանիքների վրա հիմնված բաց մրցույթի հիման վրա:<sup>9</sup> ՏԸՀ-ները վերահսկում են ԸԸՀ գործողությունները, քննում վերջիններիս դեմ հարուցված բողոքները, կազմակերպում հաշվարկներ և աղյուսակավորում արդյունքները: ԸԸՀ անդամների մեծ մասն ունի ընտրական փորձ, և ըստ ԺՀՄԻԳ ԸԴԱ գնահատականի՝ ստորին օղակի հանձնաժողովները արդյունավետ են գործել ընտրությունների նախապատրաստման հարցում:

Խորհրդարանական բոլոր կուսակցությունները և դաշինքները մինչև նոյեմբերի 21 սահմանված վերջնաժամկետը ԸԸՀ անդամների իրենց թեկնածուների ցանկերը

<sup>8</sup> Այս մրցակիցները կարող են ձևավորել նոր դաշինքներ, որոնք կարող են ներառել ընտրությունների առաջին փուլին մասնակցած այլ կուսակցություններ:

<sup>9</sup> Կանայք կազմում են ՏԸՀ ընդհանուր անդամների 32 տոկոսը; 2 կին հանդիսանում են ՏԸՀ նախագահներ և 11 կին՝ ՏԸՀ քարտուղարներ:



ներկայացրել են ԿԸՀ:<sup>10</sup> ԿԸՀ-ն անցկացրել է վիճակահանություն ԸԸՀ նախագահների և քարտուղարների պաշտոնները բաշխելու համար՝ ըստ խորհրդարանում նրանց ներկայացվածության համամասնության: Միջազգային օժանդակությամբ ԿԸՀ-ն անցկացրել է վերապատրաստում ԸԸՀ անդամների հետ քվեարկման և ձայների հաշման ընթացակարգերի վերաբերյալ: Վերապատրաստման որակը ընդհանուր առմամբ դրական է գնահատվել ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից:

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է ընտրատեղամասերում տեսախցիկների կիրառում առցանց դիտարկման միջոցով թափանցիկությունը բարձրացնելու համար: Այս ընտրությունների համար ԿԸՀ-ն կիրարկել է իր 2016թ. որոշումը, որով տեսախցիկներ են տեղադրվում միայն 1,500 ամենամեծ ընտրատեղամասերում:<sup>11</sup> Քվեարկության օրը տեսախցիկների ֆունկցիոնալության հետ կապված խնդիրներ չեն ծագել: Այնուհանդերձ, ԸՄԴԱ դիտորդների գնահատմամբ դիտարկված ընտրատեղամասերի 4 տոկոսում տեսախցիկները տեղադրված են եղել ոչ պատշաճ դիրքերում:

### Ընտրողների գրանցում

Ընտրողների գրանցումը պասիվ է և կատարվում է Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության (ԱՎՎ) կողմից վարվող բնակչության պետական ռեգիստրի հիման վրա: Ընտրողների ռեգիստրում ներառվում են ընտրությունների օրվա դրությամբ 18 տարին լրացած, Հայաստանում պաշտոնապես մշտական բնակություն ունեցող բոլոր քաղաքացիները, այդ թվում նրանք, ովքեր *փաստացի* բնակվում են արտերկրում:<sup>12</sup> Ծանր հանցագործությունների համար ազատազրկված անձինք քվեարկելու իրավունք չունեն: Դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձինք նույնպես զրկված են ընտրելու իրավունքից՝ չնայած հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքների բոլոր անհիմն սահմանափակումների վերացման մասին միջազգային չափանիշների:<sup>13</sup> Զինձառայողների, ազատազրկված, կալանավորված և ստացիոնար բուժում իրականացնող առողջապահական հաստատություններում գտնվող անձանց համար կան հատուկ ընտրացուցակներ:<sup>14</sup> Արտերկիր գործուղված դիվանագետները, զինձառայողները և նրանց

<sup>10</sup> Ընտրությունների օրը, ԸՄԴԱ գրուցակիցները նշել են, որ դիտարկված ԸԸՀ-ների անդամների գրեթե 61 տոկոսը և ԸԸՀ նախագահների 41 տոկոսը եղել են կանայք:

<sup>11</sup> Ըստ ԿԸՀ-ի՝ տեսախցիկների սահմանափակ քանակությունը պայմանավորված է համացանցային կապի հետ կապված խնդիրներով:

<sup>12</sup> Չնայած մի քանի դիմումների՝ իշխանությունները ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին չեն տրամադրել արժանահավատ տվյալներ արտերկրում ժամանակավոր կամ մշտական բնակություն ունեցող քաղաքացիների թվի վերաբերյալ:

<sup>13</sup> Տես Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ 2006թ. ՄԱԿ-ի Կոնվենցիայի (ՀԱԻԿ) 12-րդ և 29-րդ հոդվածները: Տես նաև ՀԱԻԿ հանձնաժողովի 2003թ. թիվ 4/2011 Հաղորդագրության 9.4 պարբերությունը, որում նշվում է, որ “Հոդված 29-ը չի նախատեսում որևէ ողջամիտ սահմանափակում և չի սահմանում որևէ բացառություն հաշմանդամություն ունեցող անձանց որևէ խմբի համար:”

<sup>14</sup> Ըստ օրենքի՝ զինվորական ծառայություն իրականացնող ընտրողների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման: ԱՎՎ չի տրամադրել տեղեկատվություն քվեարկելու իրավունք ունեցող ազատազրկված անձանց թվի վերաբերյալ:

ընտանիքի անդամները կարող են քվեարկել համացանցի միջոցով: Մինչև նոյեմբերի 17-ի վերջնաժամկետը ԿԸՀ դիմել է ընդհանուր թվով 729 նման ընտրող:

Ըստ օրենքի նախնական ընտրացուցակները հրապարակվել են ընտրատեղամասերում և ԿԸՀ կայքէջում հանրության ծանոթացման համար: Օրենքը ընտրողներին տալիս է բավարար հնարավորություն ուղղումների պահանջներ ներակայացնելու համար: Համաձայն ԱՎՎ-ի մինչև օրենքով սահմանված նոյեմբերի 29-ի վերջաժամկետը ըստ իրենց ժամանակավոր բնակության վայրի քվեարկելու համար դիմել է ընդհանուր թվով 12,549 ընտրող, և չի հաղորդվել համակարգի չարաշահման ոչ մի դեպքի մասին:

ԱՎՎ-ն ներկայացրել է ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունների գրանցամատյանների հետ տվյալների խաչաձև ստուգման միջոցով ընտրացուցակների ճշգրտությունը բարելավելուն ուղղված իր շարունակական ջանքերը: Չնայած այդ ջանքերի՝ ընտրողների ռեգիստրը դեռևս ներառում է հասցեներ, որտեղ հաշվառված են զգալի թվով ընտրողներ, ինչը մնում է մտահոգիչ:<sup>15</sup> Դեկտեմբերի 8-ին ԱՎՎ կողմից հրապարակվել են ընդհանուր թվով 2,573,779 ընտրողների վերջնական ընրացուցակները:<sup>16</sup> Ըստ օրենքի պահանջի և նպատակ ունենալով կանխել այլ անձի փոխարեն քվեարկելու միջոցով կատարվող ընտրակեղծիքները՝ ԿԸՀ մտադրվում է սքանավորել բոլոր ԸԸՀ-ից ստացված ստորագրված ընտրացուցակները և տեղադրել դրանք իր կայքէջում դեկտեմբերի 10-ին:<sup>17</sup> ԸՄԴԱ շահառուների մեծ մասն, ընդհանուր առմամբ, վստահություն է հայտնել ընտրացուցակների ճշգրտության նկատմամբ՝ չնայած քաղաքացիների տվյալների գաղտնիության վերաբերյալ որոշ մտահոգությունների: Ընտրողների անձնական տվյալների պարբերական հանրայնացումը հակասում է միջազգային լավ պրակտիկային:<sup>18</sup>

Ընտրատեղամասերում ընտրողների նույնականացումն իրականացվել է նախ ԸԳՍ-երի միջոցով, որում ներբեռնված է համապատասխան ընտրացուցակի էլեկտրոնային պատճենը, ապա նշվել է նաև ընտրացուցակի թղթային տարբերակի վրա: Ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը որպես կանոն սքանավորվել են ստուգելու համար, թե արդյոք ընտրողները գրանցված են տվյալ տեղամասում և թե արդյոք ընտրողը նշված է համակարգում որպես տվյալ տեղամասում արդեն իսկ քվեարկած անձ: ԿԸՀ-ն միջազգային աջակցությամբ վերապատրաստել է ԸԳՍ մասնագետներին ինտերակտիվ ուսուցման միջոցով, որը դրական է գնահատվել ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից: Դեկտեմբերի 5-ին կայացած հանրային միջոցառման ժամանակ ԿԸՀ-ն ցուցադրել է, թե ինչպես է աշխատում ԸԳՍ-ն՝

<sup>15</sup> Ըստ Թրանսփերենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հայտարարության գոյություն ունի 855 և 13 հասցե՝ բաղկացած համապատասխանաբար ավելի քան 20 և 100 ընտրողներից:

<sup>16</sup> Հրապարակված տվյալները ներառում են ընտրողների անունները, ծննդյան տարեթվերը և բնակության հասցեները՝ ըստ ընտրատեղամասերի:

<sup>17</sup> Ընտրական օրենսգրքով նախատեսված այս պայմանը առաջին անգամ կիրառվել է 2017թ.:

<sup>18</sup> Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի՝ ընտրություններին մասնակցած ընտրողների ցուցակների հրապարակման մասին 2016թ. մեկնաբանական հայտարարության III պարբերությունը շեշտում է, որ “պետք է գտնել հավասարակշռություն տվյալների պաշտպանության և քվեարկության գաղտնիության միջև մի կողմից, և ստորագրված (կնքված) ընտրացուցակները դիտելու՝ շահագրգիռ անձանց հետաքրքրության միջև մյուս կողմից”:

նպաստելով համակարգի թափանցիկությանը: Քվեարկության օրը ԸԳՍ եղել են սարքին վիճակում և աշխատել են ըստ պատշաճի դիտարկված բոլոր ընտրատեղամասերում՝ բացի երեքից:

### Թեկնածուների գրանցում

Թեկնածուները պետք է լինեն ընտրելու իրավունք ունեցող, 25 տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող և այնտեղ մշտապես բնակվող և հայերենին տիրապետող անձինք: Մեկից ավել քաղաքացիություն ունեցող անձանց առաջադրման վրա կիրառվող սահմանափակումը հակասում է ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորություններին և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքին:<sup>19</sup> Դատավորները, դատախազները, զինծառայողները, ոստիկանները, քաղծառայողների այլ կատեգորիաները և ընտրական հանձնաժողովների անդամները չեն կարող առաջադրվել որպես թեկնածուներ: Թեկնածուների ցուցակներում կարող են ընդգրկվել անկուսակցական անդամներ, սակայն օրենքն ինքնաառաջադրման հնարավորություն չի սահմանում:<sup>20</sup>

Յուրաքանչյուր մրցակից ներկայացրել է առնվազն 80 թեկնածուից բաղկացած մեկ համապետական ցուցակ և 13 ընտրատարածքներին համապատասխանող տարածքային ցուցակներ: Բոլոր մասնակիցները մուծել են պահանջվող ընտրական գրավը, որը վերադարձվում է, եթե համապետական ցուցակը ստանում է վավեր քվեների 4 տոկոսից ավելին:<sup>21</sup> Ազգային փոքրամասնությունների թեկնածուներ գրանցված են միայն Լուսավոր Հայաստան, Իմ քայլը դաշինքի, Բարգավաճ Հայաստան և Օրինաց երկիր կուսակցությունների ցուցակում: Բոլոր ընտրացուցակները բավարարել են օրենքով սահմանված գենդերային ներկայացվածության 25 տոկոսի շեմը, ըստ որի յուրաքանչյուր քայլակում առնվազն մեկ թեկնածու պետք է լինի ավելի փոքր ներկայացվածություն ունեցող սեռից:<sup>22</sup> Այս քվոտան, այնուամենայնիվ, չի երաշխավորում խորհրդարանում կանանց նույն ներկայացվածությունը, քանի որ մանդատների կեսը բաշխված է ըստ վարկանիշային ձայների: ԸՄԴԱ գրուցակիցները չեն հայտնել մտահոգություններ՝ կապված թեկնածուների գրանցման գործընթացի հետ:

<sup>19</sup> ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենի Փաստաթղթի 7.3 պարբերությունում նշվում է, որ անդամ պետությունները պետք է “երաշխավորեն չափահասության տարիքը լրացած քաղաքացիների համընդհանուր և հավասար ընտրական իրավունքը”, մինչդեռ 24-րդ պարբերությունում ասվում է, որ իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է “խստորեն համաչափ լինեն օրենքի նպատակին”: Տանասեն ընդդեմ Սոլդովայի գործում՝ 2010թ. ապրիլի 27, Հայց համար 7/08, ՄԻԵԴ-ի կողմից կայացվեց որոշում առ այն, որ երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրվելու իրավունքից զրկումը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության 3-րդ հոդվածին:

<sup>20</sup> Ըստ ԿԸՀ-ի՝ առաջադրված թեկնածուների 26 տոկոսը չեն հանդիսացել առաջադրող կուսակցության անդամներ:

<sup>21</sup> Ընտրական գրավը կազմում է 10 միլիոն ՀՀ դրամ (մոտ 18,180 եվրո; 1 եվրոն կազմում է մոտ 550 ՀՀ դրամ)

<sup>22</sup> Բացառությամբ Ազգային առաջընթաց կուսակցության՝ այլ կուսակցությունների գրուցակիցները տեղեկացրել են ժՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ դժվարացել են գտնել իգական սեռի փորձառու թեկնածուներ 25 տոկոս քվոտան ապահովելու համար: Մի քանիսն ընդունեցին, որ իրենց ցուցակներում ընգրկված կանայք “իրական թեկնածուներ” չեն:

Ներառական և մասնագիտորեն իրականացվող գործընթացում ԿԸՀ գրանցել է թեկնածություններ ներկայացրած բոլոր ինը կուսակցությունների և երկու դաշինքների ընդհանուր թվով 1,444 թեկնածուների ցուցակները, որոնցից 464 կանայք են:<sup>23</sup> ԿԸՀ-ն ժամանակին է հրապարակել թեկնածուների ցուցակները՝ նպաստելով մրցակիցների վերաբերյալ հանրության իրազեկմանը: Մինչև օրենքով սահմանված վերջնաժամկետը՝ նոյեմբերի 29-ը, ԿԸՀ-ն հաստատել է ինքնաբացարկի 39 դիմում:

## Ընտրական քարոզարշավ

Քարոզարշավի ընթացքում լիարժեք կերպով պահպանվել են արտահայտման, միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների ու տեղաշարժի հիմնարար ազատությունները: Քարոզարշավը պաշտոնապես մեկնարկել է Նոյեմբերի 26-ին և եզրափակվել՝ դեկտեմբերի 7-ի կեսգիշերին: Պաշտոնական մեկնարկից առաջ քարոզարշավի անցկացումը օրենքով չի կարգավորվում և չի արգելվում:<sup>24</sup> Ընտրությունների նշանակումից կարճ ժամանակ անց կուսակցությունները և հնարավոր թեկնածուները կապ են հաստատել ընտրողների հետ՝ հիմնականում ֆեյսբուք սոցիալական ցանցի, այնուհետև հանրահավաքների, դռնեղուռ քարոզչության, պաստառների և լրատվամիջոցների միջոցով:<sup>25</sup> Որոշ ԸՄԴԱ գրուցակիցներ հայտնել են, որ քարոզարշավի ժամկետների սղության պայմանավորված արդեն իսկ կայացած մրցակիցներն առավել նպաստավոր դիրքում են հայտնվել ռեսուրսների տեսանկյունից: Քարոզարշավը հիմնականում կենտրոնացված էր կուսակցությունների ծրագրերի դրական ներկայացման, Հայաստանի ապագայի տեսլականի իսկ մարզերում՝ տեղական համայնքներին<sup>26</sup> առնչվող խնդիրների վրա, թեև մասնակիցների մեծ մասը իրականացնում էր նաև որոշակի բացասական քարոզչություն:

Թեև քարոզչությունը որոշ չափով հատկանշվել է մամուլում որոշ թեկնածուների միջև սադրիչ փոխանակումներով, կուսակցությունների և դաշինքների՝ միմյանց և ընտրողներին դիմելու տոնայնությունը և քաղաքավարությունը ընդհանուր առմամբ դրական շարժ են ապրել քարոզարշավի ընթացքում:<sup>27</sup>

<sup>23</sup> Գրանցված քաղաքական կուսակցություններն են՝ ՀՅԴ, Լուսավոր Հայաստան, Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ (ՔՄՎ), «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն (ՔՈՄԴԿ), Ազգային առաջընթաց (ԱԱԿ), Բարգավաճ Հայաստան, ՀՀԿ, Օրինաց երկիր, Մասնա Օռեր համահայկական կուսակցություն: Գրանցված դաշինքներն են՝ Իմ քայլը դաշինք և Մենք դաշինք:

<sup>24</sup> Նոյեմբերի 23-ին ԿԸՀ-ն հրապարակեց հայտարարություն առ այն, պաշտոնական մեկնարկից առաջ քարոզարշավի իրականացումը Ընտրական օրենսգրքի խախտում չի հանդիսանում:

<sup>25</sup> Նոյեմբերի սկզբին քաղաքական կուսակցությունները և դաշինքները սկսեցել են ներկայացնել ՋԼՄ-ներում, թե ովքեր են գլխավորելու իրենց համապետական ցուցակները և նախանշել իրենց ծրագրային առաջնահերթությունները: Նոյեմբերի 24-ից 25-ը, որոշ մրցակիցներ կազմակերպել են քայլարշավներ մարզերի քաղաքներում և Երևանում, և մայրաքաղաքում սկսեցին հայտնվել «Լուսավոր Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների և «Իմ քայլը» դաշինքի քարոզարշավի գովազդային վահանակները:

<sup>26</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից դիտարկվել է ընդհանուր թվով 63 հանրահավաք, որոնք անցել են թեկնածուների և ընտրողների միջև փոխանակումների դրական մթնոլորտում: Լուրջ միջադեպեր չեն արձանագրվել:

<sup>27</sup> «Իմ քայլը» դաշինքի և ՀՀԿ-ի միջև փոխանակումները սուր բանավիճային բնույթի էին հատկապես անվտանգային քաղաքականությանը վերաբերող հարցերի շուրջ: Իմ քայլը դաշինքի մի քանի

Քարոզարշավի բարձրակետը դեկտեմբերի 5-ին հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերով հեռարձակված երեք ժամ տևողությամբ իրական բանավեճն էր, որի ընթացքում բոլոր համապետական ցուցակների առաջնորդները, միմյանց հանդեպ հարգանքի և ընդհանուր առմամբ համերաշխության մթնոլորտում քննարկում էին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ազգային անվտանգությունը, կոռուպցիայի դեմ պայքարը, դատական համակարգի անկախությունը, անցումային արդարադատությունը և տնտեսական զարգացումը: Այնուամենայնիվ, առցանց լրատվամիջոցների մեկնաբանությունների հատվածներում նկատվել է սադրիչ հռետորաբանություն:<sup>28</sup> ԸՄԴԱ-ի որոշ գրուցակիցներ նշել են նաև, որ ֆեյսբուքյան “կեղծ” հաշիվների միջոցով իրականացվել է սադրանք, ինչպես նաև տարածվել է ապատեղեկատվություն և առանձին թեկնածուների դեմ ուղղված վիրավորական խոսքեր:<sup>29</sup>

Օրենքն արգելում է հանրային պաշտոնյաներին քարոզարշավ իրականացնել իրենց պարտականությունների կատարմանը զուգահեռ, ինչպես նաև օգտագործել հանրային շինությունները, պաշտոնական տրանսպորտը կամ նյութական ռեսուրսները քարոզարշավի նպատակներով:<sup>30</sup> Վարչական ռեսուրսների չարաշահումը և հանրային հատվածի աշխատակիցների վրա ճնշման գործադրումը կանխելու համար իշխանությունները հրապարակել են հանրային նախագգուշացումներ և իրականացրել են

առաջատար թեկնածուներ՝ ներառյալ վարչապետի պաշտոնակատարը, մեղադրել են նախորդ ՀՀԿ կառավարությանը և ՀՀԿ ներկայիս թեկնածուներին կոռուպցիայի, բանակ մատակարարվող պարագաների գողության և պաշտոնական դիրքի չարաշահման մեջ: ՀՀԿ որոշ աչքի ընկնող թեկնածուներ մեղադրեցին ներկա կառավարությանը դավաճանության, պաշտոնական դիրքի չարաշահման և քաղաքական հետապնդման մեջ: Դեկտեմբերի 5-ին Ազգային Անվտանգության Ծառայությունը ծանուցում է ուղարկել ՀՀԿ առաջատար թեկնածուներից Դավիթ Շահնազարյանին ներկայանալու և պարզաբանելու իր կողմից հնչեցված դավաճանության մեղադրանքները, թեկնածուն մերժել է ներկայանալ:

28. Հղում անելով 2018թ. սեպտեմբերին Երևանի քաղաքապետի ընտրություններին “Իմ Քայլը” դաշինքի թեկնածուի կողմից արված արտահայտությանը, ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ գրուցակիցներ ուշադրություն են հրավիրել հանրային դիսկուրսի վրա, որը քաղաքական ուժերին խստորեն տարանջատել է սևի և սպիտակի, կամ որն առանձնացրել էր “հին” և “նոր” Հայաստանները: Մեկնաբանողները նաև մանրամասներ ներկայացրին առցանց լրատվամիջոցներում անձնական հարձակումներ և գոեհկաբանություններ պարունակող պառակտիչ հռետորաբանության մասին:

29. Առանձին թեկնածուներ, ինչպես նաև կուսակցություններ և դաշինքներ տեղեկացրել են ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենք վարում են իրենց սեփական ֆեյսբուքյան էջերը և հեռացնում են իրենց հասցեագրված քննադատական կամ վիրավորական մեկնաբանությունները: Ըստ ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտարկումների, մասնակիցներն այնուամենայնիվ ոչ միշտ են իրենց էջերից հեռացնում իրենց հակառակորդներին հասցեագրված քննադատական մեկնաբանությունները: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նաև ստացել է արժանահավատ պնդումներ առ այն, որ վերջին շրջանում ստեղծվել են “կեղծ” ֆեյսբուքյան հաշիվներ՝ լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերում մեկնաբանություններ թողնելու համար:

30. Նոյեմբերի 19-ին և 21-ին, Գեղարքունիք և Արագածոտն կատարած այցի շրջանակներում վարչապետի պաշտոնակատարը հանրահավաքի ընթացքում իր աջակիցներին կոչ է արել սատարել իրեն առաջիկա ընտրություններում: Նա արձակուրդ է վերցրել Նոյեմբերի 26-ից Դեկտեմբերի 5-ը քարոզարշավ իրականացնելու նպատակով: Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռիի, Շիրակի և Տավուշի մարզպետները, որոնք նույնպես առաջադրել են իրենց թեկնածությունը, արձակուրդ են վերցրել կամ հրաժարական են տվել քարոզարշավ իրականացնելու համար:

դպրոցների տնօրենների, բուժաշխատողների, տեղական պաշտոնյաների և այլոց հրահանգավորում համապատասխան արգելքների վերաբերյալ:<sup>31</sup>

ԸՄԴԱ-ի շատ զրուցակիցներ մատնանշել են իշխանությունների, մրցակիցների և հենց ընտրողների կողմից ցուցաբերված՝ ձայների առք ու վաճառքի և այլ ընտրական խախտումների խոչընդոտմանը միտված քաղաքական կամքը: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ զրուցակիցներ այնուամենայնիվ պնդել են, որ ընտրական մրցակիցներից մեկը կարճաժամկետ պայմանագրեր է կնքել մեծ թվով քարոզարշավի շրջանակներում աշխատանքներ իրականացնող անձանց և ՔՀԿ դիտորդների հետ՝ անուղղակի կերպով նրանց ձայները գնելու նպատակով՝ առանց օրենքը խախտելու:

Կուսակցությունները հազվադեպ են ներառել կին թեկնածուների իրենց քարոզարշավներում. կին թեկնածուները հազվադեպ են ինքնուրույն անցկացրել քարոզարշավներ և հանդես եկել ելույթներով դիտարկված քարոզարշավային հանրահավաքներում: Դիտարկված հանրահավաքների ունկնդիրների գերակշռող մասը արական սեռի ներկայացուցիչներ էին: Մարզերում տեղի ունեցած հանրահավաքներին մասնակցում էին միայն 15 տոկոս կանայք, իսկ Երևան քաղաքում՝ մոտ 30 տոկոս: Որոշ կին թեկնածուներ դարձել են նսեմացնող հռետորաբանության թիրախ իրենց սեռային պատկանելության պատճառով:<sup>32</sup>

### Քարոզարշավի ֆինանսավորում

Նախընտրական հիմնադրամը կարող է ներառել դրամական մուծումներ և ապրանքներ ու ծառայություններ ընտրողներից, թեկնածուներից և քաղաքական կուսակցություններից:<sup>33</sup> Իրավաբանական անձանց, օտարերկրյա կամ անանուն աղբյուրներից կատարված մուծումները չեն թույլատրվում: Օրենքը սահմանափակում է յուրաքանչյուր մրցակցի քարոզարշավի ծախսերը 500 միլիոն ՀՀ դրամի (մոտավորապես 910,000 Եվրո) չափով, և

<sup>31</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ստացել է այս տեղեկատվությունը Երևանի քաղաքապետից և Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Լոռիի և Տավուշի մարզպետերից: Նոյեմբերի 19-ին գործող վարչապետը Գեղարքունիք կատարած իր այցի ընթացքում տեղեկացրեց դպրոցների տնօրեններին և տեղական պաշտոնյաներին քարոզարշավին իրենց ներգրավվածության սամանափակումների մասին: Նոյեմբերի 15-ին կայացած կառավարության նիստի ժամանակ վարչապետի պաշտոնակատարը հիշեցրեց կառավարության անդամներին քարոզարշավում վարչական ռեսուրսի չարաշահման դեմ ուղղված սահմանափակումների մասին: Դեկտեմբերի 3-ին, Կոտայքի մարզում առաջադրված գրեթե 100 թեկնածուների հետ հանդիպման ընթացքում, ուստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը հիշեցրեց ընտրակաշառքի արգելքի մասին:

<sup>32</sup> Չնայած կուսակցությունների ընտրական ցուցակներում առաջատար դիրքեր զբաղեցնող որոշ թեկնածուներ, թե՛ կին, թե՛ տղամարդ, հաղորդել են ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենց հանդեպ առցանց տիրույթում կիրառվում է կոպիտ և վիրավորական բառապաշար, կին թեկնածուները հաճախ ստացել են բացասական մեկնաբանություններ՝ պայմանավորված իրենց սեռով: Ըստ քարոզարշավի ընթացքում կանանց փորձն ուսումնասիրող քաղաքացիական հասարակության կազմակերպության, երեք առաջատար կին թեկնածուներ Լենա Նազարյանը (“Իմ քայլը” դաշինք), Նաիրա Զոհրաբյանը (“Բարգավաճ Հայաստան” կուսակցություն) և Արփինե Հովհաննիսյանը (ՀՀԿ) դարձել են հատկապես հայիոյալից բառապաշարի թիրախներ առցանց տիրույթում:

<sup>33</sup> Համապատասխանաբար՝ մինչև 500 000 դրամ, 5 միլիոն դրամ, և 100 միլիոն դրամ Ապրանքներն ու ծառայությունները պետք է զեկուցվեն ըստ իրենց շուկայական գնի:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծամասնությունը ողջամիտ են համարում նման սահմանափակումը:

Լրատվամիջոցների, հանրային միջոցառումների և տպագիր նյութերի միջոցով իրականացվող քարոզարշավի ծախսերը պետք է կատարվեն նախընտրական հիմնադրամից: Նախքան քարոզարշավի պաշտոնական մեկնարկը քարոզարշավի շրջանակներում ստացված և ծախսված ֆինանսական միջոցների վերաբերյալ հաշվետվությունները կարգավորող իրավական դրույքներ չկան:<sup>34</sup> Բացի այդ, կազմակերպչական այնպիսի ծախսերը, ինչպիսիք են գրասենյակային տարածքի, տրանսպորտի, կապի, ինչպես նաև քարոզարշավով զբաղվող անձնակազմի համար կատարված ծախսերը կարող են կատարվել այլ աղբյուրներից և չհրապարակվել որպես քարոզարշավի ծախսեր:<sup>35</sup> Սա սահմանափակում է հաշվետվության համակարգի վստահելիությունը և ընտրական շահառուներին հասանելի տեղեկատվության թափանցիկությունը:<sup>36</sup>

Օրենքի պահանջի համաձայն, մինչև Նոյեմբերի 23-ը բոլոր ընտրական մասնակիցների կողմից բացվել են հատուկ բանկային հաշվեհամարներ քարոզարշավին առնչվող գործարքների կատարման համար: Յուրաքանչյուր երրորդ աշխատանքային օրը Կենտրոնական Բանկը բոլոր նախընտրական հիմնադրամներից կատարված նման գործարքների տվյալները ներկայացրել է ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն, որը պատասխանատու է քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության համար: Այնուհետև ՎՎԾ-ի կողմից պարբերաբար հրապարակվել են յուրաքանչյուր մրցակցի մուծումների և ծախսերի ընդհանուր գումարի վերաբերյալ ամփոփ տվյալներ:<sup>37</sup> Այնուամենայնիվ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տարբեր շահառուներից՝ ներառյալ թեկնածուներից, ստացել է հաղորդումներ և պնդումներ առ այն, որ առանձին թեկնածուներ, խախտելով օրենքը և շրջանցելով ընտրական մրցակցի իրենց բանկային հաշվեհամարը,

<sup>34</sup> Ըստ ՎՎԾ-ի, մրցակիցները պետք է օրենքով նախատեսված կարգով զեկուցեն քարոզարշավին առնչվող բոլոր մուծումների և ծախսերի մասին: Մինևույն ժամանակ, որոշ մրցակիցներ հայտնել են ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենք պարտավոր են զեկուցել միայն պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում կատարված ծախսերի մասին:

<sup>35</sup> Անգամ եթե այդպիսի ծախսերի մասին զեկուցվում է, դրանք չեն ներառվում քարոզարշավի շրջանակներում իրականացվող ծախսերի սահմանաչափում:

<sup>36</sup> Եվրոպայի խորհրդի կուսակցությունների և քարոզչության ֆինանսավորման կոռուպցիայի դեմ ընդհանուր կանոններ վերնագրով Թիվ (2003) 4 հանձնարարականի 10-րդ հոդվածում նշվում է, որ “պետությունները պետք է պահանջեն յուրաքանչյուր քաղաքական կուսակցության, յուրաքանչյուր ընտրական ցուցակի և յուրաքանչյուր թեկնածուի՝ քարոզարշավի շրջանում կատարված ուղղակի կամ ուղղակի ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ:

<sup>37</sup> Քարոզարշավի ընթացքում ամփոփված տվյալները հրապարակվել են 5 անգամ: Ըստ ՎՎԾ տվյալների “Իմ քայլը” դաշինքն ունեցել է ամենաշատ մուծումները (շուրջ 273 մլն. ՀՀ դրամ), երկրորդ տեղում է ՀՀԿ-ն (շուրջ 128 մլն. ՀՀ դրամ), ապա Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (շուրջ 104 մլն. ՀՀ դրամ): Դեկտեմբերի 8-ի դրությամբ, վերոնշյալ մրցակիցները ծախսել են համապատասխանաբար շուրջ 268 միլիոն, 127 միլիոն և 104 միլիոն ՀՀ դրամ: Մյուս մրցակիցները միասին ծախսել են շուրջ 173 միլիոն դրամ:

իրականացնում են իրենց իսկ քարոզարշավի ուղիղ ֆինանսավորում, հատկապես իրենց ընտրական շրջաններում:<sup>38</sup>

Քարոզարշավի ֆինանսավորման հաշվետվությունների ներկայացման գործընթացը դյուրացնելու համար ՎՎԾ-ն տրամադրել է ուղեցույցեր և ընտրական մրցակիցների մեծ մասի հետ անցկացրել քննարկումներ կարգավորումների մասին: Դեկտեմբերի 5-ին բոլոր ընտրական մրցակիցները ՎՎԾ են ներկայացրել քարոզարշավի մուծումների և ծախսերի վերաբերյալ միջանկյալ հաշվետվություն, իսկ քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ վերջնական հաշվետվությունները կներկայացնեն մինչև Դեկտեմբերի 13-ը:<sup>39</sup> ՎՎԾ-ն հրապարակել է միջանկյալ հաշվետվությունները Դեկտեմբերի 6-ին:

ՎՎԾ կողմից ստուգվում է, թե արդյոք մուծումները և ծախսերը թույլատրելի իրավական սահմաններում են և արդյոք ապրանքների և ծառայությունների գնահատումը ճշգրիտ է: ՎՎԾ-ն չի իրականացնում քարոզարշավի ֆինանսավորման ամենօրյա հաշվետու գումար սեփական նախաձեռնությամբ, սակայն օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ ազդանշաններ ստանալու դեպքում ծառայությունը կարող է հավելյալ տեղեկատվություն պահանջել ընտրական մրցակիցներից: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հետ զրույցի ընթացքում ՎՎԾ-ն նշել է, որ իրենց աշխատակիցների քանակի ավելացումը կնդլայներ վերահսկման հնարավորությունները:<sup>40</sup> Մինչ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծ մասը գոհունակություն են հայտնել քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ, նրանք նաև նշել են, որ առկա բացերը կարող են շահագործվել ֆինանսավորման թափանցիկության սկզբունքը շրջանցելու նպատակով՝ ինչը կարող է վտանգել քարոզարշավի հավասար պայմանները:

## ԶԼՄ-ներ

Լրատվամիջոցները բազմազան են և ներառում են պետության տարածքում գործող ավելի քան 160 ավանդական լրատվամիջոցներ և ավելի քան 200 առցանց լրատվական պորտալներ:<sup>41</sup> Հեռուստատեսությունը հանդիսանում է քաղաքական տեղեկատվության առաջնային աղբյուր՝ հատկապես մայրաքաղաքից դուրս: Առցանց լրատվամիջոցները և սոցիալական ցանցերը, մասնավորապես Ֆեյսբուք սոցիալական ցանցը, հանդիսանում են քաղաքական տեղեկատվության և բանավեճի նշանակալի հարթակ: Խոսքի ազատությունը երաշխավորված է սահմանադրությամբ և պահպանվել է քարոզարշավի ընթացքում:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զրուցակիցների մեծ մասը մատնանշում են լրատվամիջոցների ազատության հարցում առաջընթաց՝ մասնավորապես բազմակարծության տեսանկյունից:

<sup>38</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ստացել է այս տեղեկատվությունը Գեղարքունիքից, Կոտայքից, Մասիսից, Շիրակից, Վայոց Ձորից և Երևանից:

<sup>39</sup> Մրցակիցները պարտավոր են հաշվետվություն ներկայացնել մուծումների, քարոզարշավի և այլ ծախսերի և չօգտագործված ֆինանսական միջոցների մասին: ԿԸՀ-ն պետք է հրապարակի զեկույցներն իր պաշտոնական կայքում երեք օրվա ընթացքում:

<sup>40</sup> Բացի երեք մշտական աշխատակիցներից, խորհրդարանական խմբակցություններն այս ընտրությունների համար չորս աուդիտորներ են նշանակել ՎՎԾ-ում:

<sup>41</sup> Ըստ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տվյալների, կան 103 հեռուստատեսային ալիքներ՝ ներառյալ 8-ը՝ համապետական ծածկույթով, և 24 ռադիոկայաններ: Տպագիր լրատվամիջոցների թիվը կազմում է մոտավորապես 40:



Այնուամենայնիվ, նրանցից ոմանք բնութագրում են հանրային դիսկուրսը որպես ոչ նպաստավոր գործող կառավարությանը և, մասնավորապես, գործող վարչապետին ուղղված քննադատության համար: Գովազդային շուկան սահմանափակ է, և միայն մի քանի լրատվամիջոցներ են ինքնաբավ: Միևնույն ժամանակ, բազմաթիվ մասնավոր լրատվամիջոցներ սերտորեն փոխկապակցված են քաղաքական կուսակցությունների հետ՝ այդ թվում ֆինանսապես:

Նոյեմբերի 20-ին ԿՀՀ-ն վիճակահանության միջոցով յուրաքանչյուր մրցակցին հատկացրել է անվճար 30 րոպե Հանրային հեռուստաընկերության և 60 րոպե՝ հանրային ռադիոյի ամենադիտվող/ամենալսելի եթերաժամերին: Մասնավոր հեռարձակողների կողմից անվճար եթերաժամերը տրամադրվել են օրենքին համապատասխան: Բոլոր կուսակցությունները և դաշինքները, բացառությամբ Ազգային առաջընթաց կուսակցության, օգտագործել են նաև իրենց քաղաքական գովազդի համար հանրային և մասնավոր լրատվամիջոցներում հավասար պայմաններով եթերաժամ գնելու իրավունքը: Ինչ վերաբերվում է բոլոր հեռարձակողների կողմից հեռարձակվող լրատվական ծրագրերին, Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ նրանք պետք է տրամադրեն “մրցակիցների քարոզարշավի վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն”:

Ըստ օրենքի, պաշտոնական քարոզարշավի ընթացքում լրատվամիջոցների վերահսկողությունն իրականացվում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (ՀՌՀ) կողմից: Ողջունելի է այն, որ ՀՌՀ-ը մեկնաբանել է լրատվական լուսաբանմանը վերաբերող դրույթը, որպես յուրաքանչյուր մրցակցին ավելի շուտ հավասար հնարավորություն, քան հավասարաչափ լուսաբանում տրամադրելու պարտավորություն հեռարձակողների համար: ՀՌՀ-ն իրականացրել է լրատվամիջոցների իր մշտադիտարկումը և ներկայացրել է մշտադիտարկման մեկ զեկույց դեկտեմբերի 5-ին, որում չկա օրենքի խախտման որևէ բացահայտում:<sup>42</sup>

Նոյեմբերի 19-ին ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսեց լրատվամիջոցների իր մշտադիտարկումը քանակական և որակական վերլուծությամբ:<sup>43</sup> Առկա էին քաղաքական զարգացումների լուսաբանման նկատելի տարբերություններ քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ և հետո, այդ թվում՝ մշտադիտարկված բոլոր հեռարձակողները զգալիորեն նվազեցրել էին ներկա կառավարության և գործող վարչապետի լուսաբանումը: Օրինակ՝ Հ1 հեռուստաընկերությամբ կառավարությանը նվիրված լուսաբանման տոկոսը 79-ից իջել է 17-ի՝ պահպանելով բացառապես դրական կամ չեզոք տոնայնություն: Դրականն այն է, որ

<sup>42</sup> ՀՌԱՀ-ի մշտադիտարկումն ուղղված էր անվճար և վճարովի եթերաժամերի բաշխմանը, ինչպես նաև ռոտացիոն հիմունքներով օրվա ընթացքում ութ հեռարձակողների լրատվական և այլ ծրագրերի քանակական վերլուծությանը՝ առանց տոնայնության գնահատման:

<sup>43</sup> Հինգ հեռուստաալիքների՝ Հ1 (հանրային հեռուստատեսություն), Արմենիա TV, Կենտրոն TV, Շանթ TV և Երկիր Մեդիա (մասնավոր հեռուստաալիքներ) մշտադիտարկումն իրականացվել է ամեն օր 18:00-ից մինչև 24:00: Երեք ամենօրյա օրաթերթերի՝ Հայաստանի Հանրապետություն (պետության կողմից ֆինանսավորվող), Առավոտ և Հայկական Ժամանակ (մասնավոր), ինչպես նաև երեք առցանց լրատվամիջոցների՝ [www.azatutyun.am](http://www.azatutyun.am), [www.news.am](http://www.news.am) and [www.lin.am](http://www.lin.am), քաղաքական բովանդակությամբ հոդվածները և մշտադիտարկվել են:

հանրային հեռարձակողը եթեր է արձակել 10 բանավեճ, որոնցից վերջին ուղիղ եթերով հեռարձակվածին մասնակցել են բոլոր կուսակցությունների և դաշինքների ղեկավարները:<sup>44</sup>

Պաշտոնական քարոզարշավի ընթացքում մշտադիտարկված հեռուստաալիքների մեծ մասը տեսանելի ջանքեր են գործադրել բոլոր ընտրական մասնակիցներին անկողմնակալ լուսաբանելու համար՝ նպաստելով ընտրողներին տեղեկացված ընտրություն կատարելու համար անհրաժեշտ հասանելի տեղեկատվության բազմազանության ապահովմանը: Հանրային Հ1 հեռուստաընկերությունը ապահովել է բոլոր մրցակիցների հավասարակշիռ լուսաբանում՝ իրականացնելով դրանցից յուրաքանչյուրին 7 -ից 8 տոկոս լուսաբանում բացառապես դրական կամ չեզոք տոնայնությամբ: Մասնավոր Արմենիա TV հեռուստաընկերությունը տրամադրել է 6-ից 9 տոկոս ՀՀԿ, Քաղաքացու որոշում, Օրինաց Երկիր, ԱԱԿ կուսակցություններին և Իմ քայլը դաշինքին, և 1-ից 3 տոկոս՝ մյուս մրցակիցներին: Շանթ հեռուստաընկերությունը տրամադրել է 13 տոկոս ՀՀԿ-ի լուսաբանմանը, որն իրականացվել է հավասարակիռ տոնայնությամբ, և 7-ից 9 տոկոս՝ մյուս բոլոր մրցակիցների (Լուսավոր Հայաստան կուսակցություն, Իմ քայլը դաշինք, Մենք դաշինք, Օրինաց երկիր, CD և ՀՅԴ կուսակցություն) լուսաբանմանը: Երկու մասնավոր հեռուստաալիքներում էլ լուսաբանման տոնայնությունը եղել է մեծապես դրական կամ չեզոք, թեև Շանթ հեռուստաընկերության եթերում ՀՀԿ-ն և Իմ քայլը դաշինքը արժանացել են նաև որոշ չափով քննադատական ակնարկների:

Այնուամենայնիվ, այն հեռուստաալիքները, որոնք փոխկապակցված են այս կամ այն կուսակցության հետ դրսևորել են կողմնակալ մոտեցում ի օգուտ տվյալ մրցակիցների: Օրինակ՝ Երկիր Մեդիա-ն տրամադրել է 23 տոկոս բացառապես դրական կամ չեզոք տոնայնությամբ լուսաբանում ՀՅԴ կուսակցությանը, 10-ից 13 տոկոս մեծապես չեզոք տոնայնությամբ լուսաբանում Իմ քայլը դաշինքին, ՀՀԿ և Լուսավոր Հայաստան կուսակցություններին: Նմանապես՝ Կենտրոն Հեռուստաընկերությունը տրամադրել է 15 տոկոս առավելապես դրական լուսաբանում ԲՀԿ-ին և 10-ից 11 տոկոս առավելապես չեզոք լուսաբանում ԻՄ քայլը դաշինքին, Մասնա Ծոեր համահայկական կուսակցությանը և Լուսավոր Հայաստան կուսակցությանը:

Նույն կերպ, Իմ քայլը դաշինքը ստացել է 45 տոկոս առավելապես դրական տոնայնությամբ լուսաբանում Հայկական ժամանակ օրաթերթում, որը փոխկապակցված է տվյալ դաշինքին, մինչ ՀՀԿ-ն նույն օրաթերթում ստացել է 21 տոկոս լուսաբանում առավելապես բացասական տոնայնությամբ: Հայաստանի Հանրապետություն օրաթերթում քարոզարշավի լուսաբանումն ավելի սահմանափակ էր, սակայն մեծամասամբ չեզոք տոնայնությամբ և բաշխվածության տեսանկյունից համաչափ:<sup>45</sup> Առավոտ օրաթերթն

<sup>44</sup> Ազատություն առցանց հեռուստաընկերությունը (RFE/RL հայկական մասնաճյուղի մասը), lin.am-ը և 5-րդ ալիքը, ինչպես նաև մարզային մի քանի լրատվամիջոցներ նույնպես կազմակերպել են բանավեճեր: Որոշ բանավեճերում ներառվել են տարբեր կատեգորիաների թեկնածուներ, ինչպիսիք են երիտասարդները և կանայք:

<sup>45</sup> Պետական բյուջեից ֆինանսավորվող Հայաստանի Հանրապետություն օրաթերթը լուսաբանման մեծ մասը հատկացրել է իշխանություններին: Ամենաշատ լուսաբանումն ունեցել է Իմ քայլը դաշինքը՝ 9

արտացոլել է քարոզարշավի բուռն ընթացքը՝ ուշադրության կենտրոնում պահելով երկու հիմնական մրցակիցներ Իմ քայլը դաշինքին և ՀՀԿ-ին՝ տրամադրելով յուրաքանչյուրին համապատասխանաբար 17 և 16 տոկոս լուսաբանում, վերջինին՝ առավել քննադատական: Առցանց ՁԼՄ-ներն իրենց գրավոր լուսաբանումներում ավելի մեծ ուշադրություն են հատկացրել Իմ քայլը դաշինքին: Լուսաբանումը եղել է առավելապես դրական կամ չեզոք տոնայնությամբ, միևնույն ժամանակ որոշ քննադատական ակնարկներով: Երկրորդ ամենալայն լուսավանվող մրցակիցը տարբերվել է ըստ ՁԼՄ-ների:<sup>46</sup>

## Դիմումներ և բողոքներ

ԸԸՀ-ի և ՏԸՀ-ի դեմ բողոքները կարող են ներկայացվել համապատասխանաբար ՏԸՀ և ԿԸՀ, մինչդեռ ԿԸՀ-ի դեմ բողոքները գտնվում են Վարչական դատարանի իրավասության ներքո:<sup>47</sup> Ընտրացուցակներում անճշտությունների վերաբերյալ բողոքները կարող են ներկայացվել ԱՎՎ, որի որոշումը կարող է բողոքարկվել առաջին աստիճանի դատարանում:<sup>48</sup> Չնայած ԺՀՄԻԳ ԸԴԱ և Վենետիկի հանձնաժողովի նախորդ հանձնարարականներին և միջազգային լավ փորձին՝ ընտրողները, լրատվամիջոցների ներկայացուցիչները և դիտորդները կարող են բողոք ներկայացնել միայն իրենց սեփական իրավունքների ոտնահարման վերաբերյալ, իսկ վստահված անձինք և ԸԸՀ հանձնաժողովի անդամները կարող են բողոք ներկայացնել իրենց սեփական և այլ շահառուների իրավունքների ոտնահարման վերաբերյալ:<sup>49</sup>

Մրցակիցները, թեկնածուները, կուսակցությունների վստահված անձինք (ովքեր ներկա են եղել ձայների հաշվարկի ընթացքում) և տվյալ ԸԸՀ անդամները, ովքեր արտահայտել են հատուկ կարծիք, կարող են բողոքարկել տվյալ ընտրատեղամասում քվեարկության արդյունքները ՏԸՀ-ում, ապա՝ ԿԸՀ-ում: Հակառակ միջազգային պահանջների՝ քվեարկության վերջնական արդյունքները՝ կարող են բողոքարկվել Սահմանադրական դատարանում բացառապես մրցակիցների կողմից:<sup>50</sup>

տոկոս, ապա Մենք դաշինքը՝ 5 տոկոս, մյուս մրցակիցները ստացել են 4 և 2 տոկոս լուսաբանում: Լուսաբանումը եղել է առավելապես չեզոք:

<sup>46</sup> Իմ քայլը դաշինքը ստացել է 27 տոկոս լուսաբանում [www.lin.am](http://www.lin.am) և համապատասխանաբար 24 և 20 տոկոս [www.news.am](http://www.news.am) և [www.azatutyun.am](http://www.azatutyun.am) առցանց լրատվամիջոցներում: [www.lin.am](http://www.lin.am) -ում երկրորդ ամենաշատ լուսաբանվող մրցակիցը եղել է Լուսավոր Հայաստանը՝ բացասական լուսաբանում չի եղել: [www.news.am](http://www.news.am)-ում և [www.azatutyun.am](http://www.azatutyun.am)-ում ՀՀԿ-ն եղել է երկրորդ ամենաշատ լուսաբանվող մրցակիցը և ստացել է զգալի քանակությամբ քննադատություն: [www.azatutyun.am](http://www.azatutyun.am) -ում Լուսավոր Հայաստան և Բարգավաճ Հայաստան կուսակցություններն ունեցել են նույնքան լուսաբանում ինչ ՀՀԿ-ն, սակայն համեմատաբար չեզոք տոնայնությամբ:

<sup>47</sup> Ընտրությանը վերաբերող բոլոր բողոքները կարող են ներկայացվել նաև դատարաններ: Հանձնաժողովները չպետք է քննի այն բողոքները, որոնք ներկայացվել են նաև դատարան:

<sup>48</sup> Ըստ ԱՎՎ-ի, ընտրացուցակների ճշգրտության առնչությամբ առ այսօր բողոքներ չեն ներկայացվել:

<sup>49</sup> Վենետիկի հանձնաժողովի 2002թ. Լավ պրակտիկայի վերաբերյալ կանոնագրքի բացատրական գեկույցի բաժին 99-ում ասվում է, որ “(ընտրական) բողոք ներկայացնելու հնարավորությունը պետք է հասանելի լինի հնարավորինս լայն շրջանակների, ընտրատարածքի յուրաքանչյուր ընտրողի համար պետք է հնարավոր լինի..... բողոք ներկայացնել”

<sup>50</sup> Վենետիկի հանձնաժողովի 2002թ. լավ պրակտիկայի վերաբերյալ կանոնագրքի բաժին II.3.3-ով խորհուրդ է տրվում, որ “բոլոր թեկնածուները և բոլոր ընտրողները, որոնք գրանցված են տվյալ ընտրատարածքում, պետք է ունենան բողոքարկելու իրավունք”: Այնուամենայնիվ, ընտրողների

Չնայած բողոքների ներկայացման և դրանց վերաբերյալ որոշումների ընդունման ժամկետներն ընդհանուր առմամբ ողջամիտ են, ընտրությունների արդյունքների ամփոփումից առաջ ՏՀՀ-ի և ԿՀՀ-ի կողմից բողոքների քննման ժամկետները համընկնում են: Դա կարող է խաթարել նման բողոքների հանդեպ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների կիրառումը:<sup>51</sup>

Նախքան ընտրությունների օրը ԿՀՀ-ի և դատարանների կողմից ստացվել են սահմանափակ քանակության բողոքներ:<sup>52</sup> Ընտրություններին նախորդող օրվա դրությամբ ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությանը հայտնի չի եղել ՏՀՀ ներկայացված բողոքի որևէ դեպք: Դեկտեմբերի 8-ի դրությամբ գլխավոր դատախազի՝ ընտրախախտումներով զբաղվող աշխատանքային խումբը առանձնացրել է ընտրախախտումների, այդ թվում՝ ընտրակաշառքի և քարոզարշավին մասնակցության խոչընդոտման կամ պարտադրման 76 դեպք և նախաձեռնել է 19 հետաքննություն դրանց վերաբերյալ ստացված հաղորդումների հիման վրա: ԸՄԴԱ-ի գրուցակիցները որևէ մտահոգություն չեն հայտնել ընտրությունների վարչարարությամբ զբաղվող մարմիններ, դատարաններ և իրավապահ մարմիններ դիմումների և բողոքների ներկայացման համակարգի մատչելիության վերաբերյալ: Քվեարկության օրը դատախազությունը զեկուցել է իրենց կողմից 32 դեպքերի քննության մասին, իսկ ոստիկանությանը զեկուցել է ընտրության օրը տեղի ունեցած 17 ընտրախախտումների մասին, այդ թվում մեկ անհատի ձերբակալության մասին, ով ենթադրաբար ներգրավված էր ձայների առք ու վաճառքում:

Դրական է այն փաստը, որ 2018թ. ՀՀ Վարչական Իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում իրականացված փոփոխություններով քաղաքական կուսակցություններին և քաղաքացիական դիտորդներին հնարավորություն է ընձեռվել ընտրական իրավախախտումների վերաբերյալ դատական վարույթներ սկսել: Միննույն ժամանակ, հնարավոր դիմումատուներից կարող է պահանջվել դատական վճար կատարել վարչական վարույթը սկսելու համար: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ գրուցակիցներ կարծիք են հայտնել առ այն, որ այսպիսի իրավական ծախսերը և դրանց անհամաչափ կիրառումը կարող են խոչընդոտել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի կիրառումը:<sup>53</sup>

---

կողմից ընտրությունների արդյունքների բողոքարկումների հանդեպ կարող է կիրառվել ողջամիտ քվորում:

<sup>51</sup> Ընտրության օրվա կամ հետընտրական խախտումներին վերաբերող բողոքը կամ դիմումը պետք է ներկայացվի ՏՀՀ կամ ԿՀՀ՝ ԿՀՀ կողմից արդյունքների ամփոփումից ոչ ուշ, քան երկու օր առաջ: ՏՀՀ-ներն իրավունք ունեն նման բողոքների առնչությամբ որոշում կայացնել արդյունքների ամփոփումից ոչ ուշ, քան մեկ օր առաջ՝ այդպիսով գործնականում չթողնելով հնարավորություն բողոքարկելու նման որոշումը ԿՀՀ օրենքով սահմանված ժամկետներում, այսինքն՝ արդյունքների ամփոփումից երկու օր առաջ:

<sup>52</sup> ԿՀՀ -ն ստացել է ապօրինի քարոզարշավի մասին երկու բողոք, քարոզարշավին առնչվող ապօրինի նյութերը վերացնելու, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու մասին մի շարք դիմումներ: Վարչական դատարանը ստացել է մերժել է մեկ բողոք՝ ուղղված ԱՎՎ որոշման դեմ, որով վերջինս չի տրամադրել քաղաքացիության վկայական երկքաղաքացիություն ունեցող հնարավոր թեկնածուին:

<sup>53</sup> Վարչական դատարանում գործ հարուցելու վճարը կազմում է 4,000 ՀՀ դրամ, Վերաքննիչ դատարանում՝ 10,000 ՀՀ դրամ, իսկ Վճռաբեկ դատարանում՝ 20,000 ՀՀ դրամ: Գումարը չի վճարվում, եթե գործը վերաբերում է բողոքարկողի անձնական իրավունքներին: ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցները

## ՔՀԿ և միջազգային դիտորդներ

Օրենքով նախատեսվում է ինչպես միջազգային այնպես էլ ՔՀԿ դիտորդների ներկայություն ընտրատեղամասերում:<sup>54</sup> Դրական է այն, որ ընտրական օրենսգրքում 2018թ. մայիսին արված փոփոխություններով վերացվել են սահմանափակումները կապված լրագրողների թվի հետ, որ լրատվամիջոցները կարող են հավատարմագրել ընտրատարածքներում դիտարկում իրականացնելու համար: Չնայած ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներին, Ընտրական օրենսգրքով պահանջվում է, որպեսզի ՔՀԿ դիտորդական խմբերի կանոնադրությունը ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարվա ընթացքում ներառի ուղիղ հղում ժողովրդավարությանը և մարդու իրավունքների պաշտպանությանը:

Նոյեմբերի 24-ի վերջնաժամկետով ԿԸՀ-ն ստացել է հավատարմագրման 25 հայտ քաղաքացիական դիտորդական կազմակերպություններից, և արդյունքում հավատարմագրվել են դրանցից 22-ը, որոնց դիտորդների ընդհանուր թիվը կազմում 17, 813:<sup>55</sup> Թեև կայացած և փորձառու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից առկա էր ընտրությունները դիտարկելու իրական ջանք, ԸՄԴԱ-ի մի շարք գրուցակիցներ մտահոգություն հայտնեցին հավատարմագրում ստացած կազմակերպությունների զգալի հատվածի՝ քաղաքական կուսակցությունների հետ ուղիղ, այդ թվում՝ պայմանագրային փոխկապակցվածության վերաբերյալ:<sup>56</sup> ԸՄԴԱ-ի գրուցակիցները նշել են, որ սա կարող էր լինել քաղաքական կուսակցությունների և դաշինքների կողմից ընտրական ծախսերի շրջանակներից դուրս գումարների ծախսի դիտավորյալ քողարկման /ընտրական տեղամասում մեկական վստահված անձի իրավական սահմանափակումը շրջանցելու կանխամտածված փորձ:<sup>57</sup> ԸՄԴԱ կողմից դիտարկված ընտրատեղամասերում ՔՀԿ դիտորդների՝ համեմատաբար փոքր թվով ներկայությունը (52 տոկոս)՝ համեմատած ՔՀԿ հավատարմագրված դիտորդների թվի հետ, խոսում է ընտրությունների օրվա գործընթացները դիտարկելու գործում նրանց մտադրության կամ հետաքրքրվածության պակասի մասին: ԿԸՀ կողմից

---

հայտարարեցին, որ որոշ դատավորներ կիրառում են վճարը պաշտոնական յուրաքանչյուր բողոքի համար, իսկ մյուսները՝ բողոքում արձարծված յուրաքանչյուր կետի համար:

<sup>54</sup> ՔՀԿ դիտորդները պետք է ընդունեն դիտորդների համար սահմանված ներքին վարվեցողության կանոններ և անցկացնեն իրենց սեփական վերապատրաստումները՝ ԿԸՀ կողմից հավատարմագրվելու նպատակով:

<sup>55</sup> ԿԸՀ-ն մերժել է “Համահայկական երիտասարդական ցանց” ՀԿ-ի դիմումը, որը ներկայացրել էր 5,406 դիտորդներից բաղկացած ցուցակ, գրանցման համար սահմանված իրավական պահանջներին չհամապատասխանելու պատճառով: Ավելին, ԿԸՀ գործը ուղարկել է դատախազություն՝ փաստաթղթերի հնարավոր կեղծման կասկածանքով: “Իրավագոր” և “Համաչափ զարգացում” ՀԿ-երը՝ համապատասխանաբար 5,504 և 5,410 դիտորդների թեկնածուներով, , հետ են վերցրել իրենց դիմումները:

<sup>56</sup> Տես՝ Թրանսփերենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի՝ նոյեմբերի 26-ի հայտարարությունը:

<sup>57</sup> Տես ՔՀԿ-երի կողմից Ընտրությունների անկուսակցական դիտարկման և մշտադիտարկման մասին ընդհանուր սկզբունքների Հռչակագրի 8-րդ պարբերությունը:

հավատարմագրվել են նաև թվով ութ միջազգային կազմակերպություններ՝ 509 դիտորդներով:

### Ընտրությունների օր

Ընտրությունների օրն ընթացել է հանգիստ, խաղաղ, առանց ընտրողների վրա ճնշում գործադրելու կամ նրանց ահաբեկելու և ԸՄԴԱ դիտորդների մեծամասնության կողմից այն գնահատվել է դրական: Դիտորդներն, այնուամենայնիվ, նշեցին, որ զգալի թվով ընտրատեղամասեր (71 տոկոս) հասանելի չեն եղել տեղաշարժվելու հետ խնդիրներ ունեցող քվեարկողների համար, որը կարող է ունենալ համար դժվարություններ առաջացրած լինել իրենց կամքն արտահայտելու գործում: Ընտրատեղամասերի փակվելուց հետո ԿԸՀ-ն հաղորդել է, որ ընտրություններին մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող անձանց 48.6 տոկոսը:

ԸՄԴԱ բոլոր դիտարկումներում ընտրատեղամասերի բացումը գնահատվել է դրական, և, ընդհանուր առմամբ, նրանք բացվել են ժամանակին: Դիտարկումների 99 տոկոս դեպքերում քվեարկությունը գնահատվել է դրական՝ արտացոլելով ԸԸՀ-երի աշխատանքի համապատասխանությունը ընթացակարգերին: Ընտրատեղամասերում կուսակցությունների վստահված անձանց (դիտարկումների 93 տոկոս դեպքերում) և ՔՀԿ դիտորդների (53 տոկոս) ներկայությունը երաշխավորել է ընտրությունների գործընթացի թափանցիկությունը: Այնուամենայնիվ, սահմանափակ դեպքերում (դիտարկումների 3 տոկոս դեպքերում) կուսակցությունների վստահված անձինք և դիտորդները միջամտել են գործընթացին: Դիտարկված տեղամասերի 5 տոկոսում ներկա են գտնվել չլիազորված անձինք, հիմնականում ուստիկաններ (երբ քվեարկելուց չեն եղել): Որոշ դեպքերում նկատվել են ընտրատեղամասերի մերձակայքում քարոզարշավին առնչվող նյութեր:

Ընդհանուր առմամբ, ընտրություններին վերաբերող նյութերը եղել են հասանելի, իսկ ընթացակարգերը՝ պահպանված, սակայն դիտարկված ընտրատեղամասերի 10 տոկոսում առաջադրված թեկնածուների ցուցակները փակցված չեն եղել: Ընդհանուր առմամբ, բայց ոչ միշտ, քվեարկողները քվեաթերթիկում նշում կատարել են գաղտնիության պայմաններում: Մասնավորապես, մարդկանցով գերծանրաբեռնվածություն դեպքեր դիտարկվել են ընտրատեղամասերի 11 տոկոսում, իսկ քվեարկության գործընթացի ոչ սահուն իրականացման դեպքեր՝ 7 տոկոսում, որը մասամբ տեղի է ունեցել հերթերի թերի հսկման (3 տոկոս) և ընտրատեղամասերի անհարմար դասավորության պատճառով (2 տոկոս):

ԸՄԴԱ-ին հիմնականում թույլ են տվել իրականացնել դիտարկումներ առանց սահմանափակումների, բայց դիտարկված ընտրատեղամասերի 4 տոկոսում չեն թույլատրել ծանոթանալ ընտրացուցակների հետ: Ընտրատեղամասերի 4 տոկոսում դիտարկվել են խմբով և ընտանիքով քվեարկության դեպքեր, որը մտահոգության տեղիք է տալիս:

Բացի երկու ընտրատեղամասերից՝ մնացած բոլորում ձայների հաշվարկը գնահատվել է դրական՝ նշելով, որ հաշվարկի գործընթացն իրականացվել է առանց ընթացակարգային զգալի խախտումների: Ուշադրության արժանի փոքր խախտումների թվում են նրանք, որ

նշված քվեաթերթիկներով ծրարները ցույց չեն տրվել ներկաներին մեկ առ մեկ (դիտարկումների 11 դեպքերում) և տարածքային թեկնածուների քվեները չեն հաշվվել մեկ առ մեկ (12 դեպք): ԸՄԴԱ դիտորդները նշել են մի քանի դեպքեր, երբ տարածքային թեկնածուների քվեները անվավեր են ճանաչվել հետևելով օրենքի դրույթներին, չնայած քվեարկողի մտադրության հստակ լինելուն, ինչը խոսում է ընթացակարգերի վերանայման անհրաժեշտության մասին: Ըստ դիտորդների գնահատման չորս դեպքում ձայների հաշվարկը եղել է անկազմակերպ:

Մի քանի ԸԸՀ-եր (11 դիտարկումներում) դժվարացել են լրացնել արդյունքների արձանագրությունները հիմնականում որոշ թվերի անհամապատասխանության պատճառով, ինչպես օրինակ՝ ընտրացուցակներում նշված ստորագրությունների քանակի անհամապատասխանությունը քվեարկողներին տրված ինքնաստանձվող դրոշմանիշների հետ (ինը ընտրատեղամասում): Չնայած երեք ընտրատեղամասերում ԸԸՀ անդամները նախապես ստորագրել են արդյունքների արձանագրությունները՝ արդյունքների կանխամտածված կեղծման դեպք չի գրանցվել: Քվեարկության ժամանակ, ընտրատեղամասերում (յոթ դեպք) ներկա են գտնվել մի քանի ոստիկան, որոնք սակայն չեն միջամտել: Մրցակիցների վստահված անձինք անմիջականորեն մասնակցել են դիտարկված ութ ընտրատեղամասերում անցկացված ձայների հաշվարկին:

Աղյուսակավորման գործընթացը դիտարկվել է բոլոր 38 ՏԸՀ-երում, որոնցից 34-ում այն գնահատվել է դրական: Չնայած գործընթացն, ընդհանուր առմամբ, լավ էր կազմակերպված՝ ԸՄԴԱ դիտորդները նշել են ԸԸՀ արձանագրությունների հանձնման վատ կազմակերպման դեպքեր հինգ ՏԸՀ-ում, արդյունքների աղյուսակավորման անբավարար պայմաններ որոշ ՏԸՀ-ում, անբավարար տարածքի հետ կապված խնդիրներ 11 ՏԸՀ-ում և լարվածություն կամ հուզումներ 4 ՏԸՀ-ում: ԸՄԴԱ դիտորդները նշել են որոշ դեպքեր, երբ ԸԸՀ-երը լրացրել են արձանագրությունները կամ դրանցում կատարել ուղղումներ նախքան ՏԸՀ ներկայացնելը. այնուամենայնիվ, այդպիսի կանխամտածված կեղծում չի դիտարկվել: ՏԸՀ-երն ունեն ընտրատեղամասերի փակումից հետո 24 ժամ ամփոփված արդյունքների արձանագրությունը ԿԸՀ ուղարկելու համար:

---

### **ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ**

---

Երևան, դեկտեմբերի 3, 2018թ.: Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ սույն հայտարարությունը կազմվել է ընդհանուր նախաձեռնության արդյունքում, որում ներգրավված են ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վերաժողովը (ԵԱՀԿ ԽՎ) Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՄՎ) և Եվրոպական խորհրդարանը (ԵԽ): Գնահատումը կատարվել է ընտրությունների համապատասխանությունը ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած և այլ միջազգային պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների չափանիշներին և ազգային օրենսդրությանը որոշելու նպատակով:

ԵԱՀԿ գործող նախագահի կողմից Պարոն Պետեր Օսուսկին նշանակվել էր ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդական առաքելության հատուկ համակարգող և ղեկավար: Տիկին Նահիմա Լանջրին գլխավորում էր ԵԱՀԿ ԽՎ պատվիրակությունը: Պարոն Ալեկսանդր Պոչիեյը գլխավորում էր ԵԽՄՎ պատվիրակությունը: Տիկին Հայդի Հաուսալան գլխավորում էր ԵԽ պատվիրակությունը: Դեսպան

Ուրշուլա Գացեկը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի ղեկավարն է, ով ստանձնել է այդ պաշտոնը նոյեմբերի 12-ից:

Ընտրությունների միջազգային դիտորդական սույն առաքելության մեջ ընդգրկված բոլոր հաստատությունները հավանություն են տվել 2005 թվականի Ընտրությունների միջազգային դիտորդության սկզբունքների մասին հչակագրին: Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ սույն հայտարարությունը կազմվել է մինչև ընտրության գործընթացի ավարտը: Ընտրության վերջնական գնահատականը մասնակիորեն կախված է ընտրական գործընթացի մնացած փուլերի անցկացումից, ներառյալ՝ արդյունքների հաշվարկը, աղյուսակավորումը և արդյունքների հրապարակումը և քվեարկության օրվան հաջորդող հնարավոր բողոքների և դիմումների քննումը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը կիրառարակի համապարփակ վերջնական զեկույց, ներառյալ հնարավոր բարեփոխումների մասին հանձնարարականները, ընտրական գործընթացի ավարտից հետո՝ ութ շաբաթվա ընթացքում: ԵԱՀԿ ԽՎ-ն իր զեկույցը կներկայացնի 2019 թվականի փետրվարին Վիեննայում կայանալիք իր Մշտական կոմիտեի հանդիպմանը: ԵԽԽՎ-ն իր զեկույցը կներկայացնի Ստրասբուրգում կայանալիք 2019թ. ձմեռային նստաշրջանի ժամանակ: ԵԽ-ն իր զեկույցը կներկայացնի 2019 թ. հունվարին կայանալիք իր Արտաքին գործերի կոմիտեի նիստին:

ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն կազմված է մայրաքաղաքում տեղակայված 14 փորձագետներից և 24 երկարաժամկետ դիտորդներից, որոնք տեղակայվել են պետության ողջ տարածքում: Ընտրության օրը ներկա են եղել 317 երկրների 39 դիտորդներ, այդ թվում՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 246 երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդներ, ինչպես նաև ԵԱՀԿ ԽՎ-ի 46 անդամներից կազմված պատվիրակությունը, ԵԽԽՎ-ի 12 անդամից բաղկացած պատվիրակությունը և ԵԽ-ի 10 անդամից բաղկացած պատվիրակությունը: Քվեարկության բացումը դիտարկվել է 79 տեղամասային կենտրոններում, քվեարկությունը դիտարկվել է 975 տեղամասային կենտրոններում պետության ողջ տարածքով: Արդյունքների հաշվարկը դիտարկվել է 100 տեղամասերում, իսկ աղյուսակավորումը՝ XX ՏՀՀ-ներում:

ԸՂԱ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել իշխանություններին՝ նրանց կողմից ընտրությունների դիտարկում իրականացնելու հրավերի համար և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ աջակցության համար: ԸՂԱ-ն Ցանկանում է իր երախտագիտությունը հայտնել նաև պետական այլ մարմիններին, քաղաքական կուսակցություններին, լրատվամիջոցներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, միջազգային համայնքի ներկայացուցիչներին՝ համագործակցության համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար, խնդրում ենք կապվել հետևյալ անձանց հետ.

- Դեսպան Ուրսուլա Գացեկ, ԺՀՄԻԳ ԸՂԱ –ի ղեկավար, Երևանում՝ (+374 (0) 10 599 970);
- Թոմաս Ռայմեր, ԺՀՄԻԳ խոսնակ՝ +374 999 03 822 կամ +48 609 522 266 կամ Ալեքսեյ Գրոմով, ԺՀՄԻԳ ընտրությունների խորհրդատու, Վարշավայում՝ (+48 663 910 311),
- Անդրեաս Բեյքեր, ԵԱՀԿ ԽՎ, +374 999 03 713 կամ +45 60 10 81 26;
- Բոգդան Տոբկատորիու, ԵԽԽՎ, +374 449 99 075 կամ +33 650 39 29 40;
- Ջուլիեն Քրամփու, ԵԽ, +374 430 62 570 կամ +32 473 52 50 72

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի հասցեն՝

“Արմենիա Մարիոթ” հյուրանոց, 4-րդ հարկ, Ամիրյան 1, Երևան 0010



---

Հեռ. + 374 10 599 970, ֆաքս՝ + 374 10 599 973., էլ. հասցե՝ office@odihr.am

Սույն զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը:  
Հայերեն լեզվով հասանելի է ոչ պաշտոնական թարգմանություն: